

**Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Սեմին
«Արարատ» Պաշտօնաթերթի Նախաձեռնութեամբ
Ուշագրաւ Դասախօսութիւն՝
«Քիւտեր, Չազաներ, Քրտացած Հայեր»
Միջազգային Լրագրող Համօ Մոսկոֆեանի Կողմէ**

«Արարատ», Պէյրութ, 21 Փետրուար 2014

Քաջարի նախաձեռնութեամբը «Արարատ» օրաթերթի ու բարձր ներկայութեամբ պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեանի ու երկարամեայ խորհրդարանական Ընկ. Տոքթ. Եղիա Ճերեճեանի, Ս.Դ.Հնչակեան կուսակցութեան Լիբանանի շրջանի վարիչ մարմնի ատենապետ Ընկ. Ալեքսան Թեօշկերեանի եւ անդամներուն, «ՍԷՆ Մարք» բժշկական կեդրոնի հիմնադիր սեփականատեր, «Դիտակ» ամսագրի խմբագրապետ Տոքթ. Սեմ Ռագուպեանի, պետական նախկին երեսփոխան Տոքթ. Նուրիճան Տեմիրճեանի՝ Չորեքշաբթի, 19 Փետրուար 2014 թուի երեկոյեան, Հ.Կ.Բ.Մ.-ի դահլիճին մէջ տեղի ունեցաւ եզակի դասախօսութիւն մը:



**Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Սեմին
«Արարատ» Պաշտօնաթերթի Նախաձեռնութեամբ
Ուշագրաւ Դասախօսութիւն՝
«Քիւտեր, Չազաներ, Քրտացած Հայեր»
Միջազգային Լրագրող Համօ Մոսկոֆեանի Կողմէ**

«Արարատ», Պէյրութ, 21 Փետրուար 2014

Քաջարի նախաձեռնութեամբը «Արարատ» օրաթերթի ու բարձր ներկայութեամբ պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեանի ու երկարամեայ խորհրդարանական Ընկ. Տոքթ. Եղիա Ճերեճեանի, Ս.Դ.Հնչակեան կուսակցութեան Լիբանանի շրջանի վարիչ մարմնի ատենապետ Ընկ. Ալեքսան Թեօշկերեանի եւ անդամներուն, «ՍԷՆ Մարք» բժշկական կեդրոնի հիմնադիր սեփականատեր, «Դիտակ» ամսագրի խմբագրապետ Տոքթ. Սեմ Ռագուպեանի, պետական նախկին երեսփոխան Տոքթ. Նուրիճան Տեմիրճեանի՝ Չորեքշաբթի, 19 Փետրուար 2014 թուի երեկոյեան, Հ.Կ.Բ.Մ.-ի դահլիճին մէջ տեղի ունեցաւ եզակի դասախօսութիւն մը:



Լիբանանահայ մտաւորականութեան ընտրանին, պատուարժան հիւրեր, մշակոյթի եւ գործարար աշխարհի անձնաւորութիւններ՝ փութացած էին ունկնդրելու, «Քիւրտեր, Չազաներ, Քրտացած հայեր» վերտառութեամբ, սահիկներու եւ Տերսիմի, Արեւմտեան Հայաստանի 1000-ամեայ երգերու, երաժշտութեան ընկերակցութեամբ (պատրաստուած հայ ժողովուրդի նոր օրերու Կոմիտաս՝ Չազա Միքայէլ Ասլանի կողմէ) շուրջ երկժամեայ դասախօսութիւն մը, ներկայացուած միջազգային լրագրող, քրտական եւ քրտացած հայերու մասնագետ՝ Համօ Մոսկոֆեանին կողմէ:

Լիբանանի եւ Հայաստանի ազգային քայլերգներու ունկնդրութենէն ետք, «Արարատ» օրաթերթի տնօրէնուհի, Անի Եփրեմեան պաշտօնապէս բացումը կատարեց դասախօսական երեկոյին: Իր սրտի խօսքը յայտնեց «Դիտակ»-ի խմբագրապետ ՍԵՄ Ռազուպեան, գլխաւոր բարոյական ու ֆինանսական աջակիցը լրագրող Համօ Մոսկոֆեանի դէպի Քիւրտիստան, Ռուսիա, Գերմանիա, Արցախ ճանապարհորդութիւններուն: Ան նշեց թէ իր հայրն ու քրտացած հորաքոյրը եւս ցեղասպանութենէն փրկուած են քիւրտերու եւ արաբներու կողմէ՝ կոչ ընելով բարեկամական կամուրջներ հաստատելու հայ ժողովուրդի հանդէպ ջերմ վերաբերմունք ցոյց տուող հակաթրքական պայքարի դրօշակիր դարձած Իրաքի եւ Իրաքեան Քիւրտիստանի, Թուրքիոյ, Եւրոպայի քիւրտ ղեկավարներուն եւ կազմակերպութիւններուն հետ:

Ապա բեմ հրաւիրուեցաւ օրուան բանախօսը՝ Համօ Մոսկոֆեան, որ մանրամասնօրէն նկարագրեց իր 6 ճանապարհորդութիւնները դէպի Իրաքեան Քիւրտիստան, ուր գրկաբաց ընդունուած է բացարձակ ապահովութեան եւ բարգաւաճման մէջ ապրող, հայ, ասորի, քրիստոնեայ, եգիտի փոքրամասնութիւններու ղեկավարներ՝ խորհրդարանականներ Սելիմ Թօմա Գագոյի (Երպիլ), Արամ Շահին Բակոյեանի (Չախօ), Երուանդ Ամենեանի (Տիոք), քիւրտ նախարարներ Խէյրի Պօզանիի (Լալիչ Երպիլ), Մահմուտ Քալայի (Սուլէյմանիյէ), Վահապ Մաուլաուէի (Երպիլ), «Իշթար» արբանեակային հեռատեսիլի տնօրէն Ռազմիկ Մուրատեանի, Տիոքի Ներսէս Շնորհալի Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Մասիս Շահինեանի, համալսարանի քրտագիտութեան ամպիոնի վարիչ Վարդգէս Սարգիսեանի կողմէ:

Դասախօսութեան երկրորդ մասը կ'ընդգրկէր Տերսիմի զազաներն ու 1937-38 թուականներուն մեծ առաջնորդ ու նահատակ Սէյիտ Ռըզայի կողմէ փրկուած հայերու եւ զազա-քզլպաշներու ցեղասպանութիւնը Աթաթիւրքի եւ հայուհի ռազմական օդաչու որդեգիր աղջկան՝ Սապիհա Կեօքճանի (Խաթուն Սեպիլճեան) կողմէ՝ աւելի քան 140.000 զոհեր, Տերսիմի շուրջ 60 հայկական վանքերն ու եկեղեցիները քարուքանդ ըրած այդ բարբարոսութիւնը, աւելի եւս սերտացուց հայ-քիւրտ, զազա-քզլպաշ ժողովուրդներու պայքարը թրքական վայրագութեան եւ անպատմելի ոճիրներուն դէմ:

Դասախօսութեան երրորդ մասը ընդգրկեց լրագրող Համօ Մոսկոֆեանի շուրջ 20 տարուան հանդիպումները քրտացած հայերու հետ՝ Գերմանիոյ Վիսպատէն ու Ֆրանքֆորթ, Ռուսըլիայն եւ Տայնց քաղաքներու, ինչպէս նաեւ Իրաքեան Քիւրտիստանի Հավրեզ եւ Ավզրուկ աւաններուն մէջ: Օրուան բանախօսը նշեց Գերմանիոյ հայոց հոգեւոր առաջնորդ Գարեգին Պեքճեանի քրտացած հայու զաւակ ըլլալը եւ այն կարեւոր դերը, որ կը խաղայ քրտացած հայերը մկրտելով, Հայ Առաքելական Եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդի գիրկը վերադարձնելու սրբազան առաքելութեամբ...:

Ինչպէս նաեւ ասորի ղեկավար Շապօ Աքիլլը, Մուշ-Վարթոյի քրտացած հայ Սիմոն (Սետեթ) Կիւնտէնը եւ իր խիզախ ընտանիքը, Էրզրումցի քրտացած հայորդի Տիգրան Չաթենքայան եւ այլոց տարած պայքարը, ազատագրուելու ցեղասպանութեան սարսափի մթնոլորտէն եւ փրկելու իրենց «կորուսեալ» եղբայրները:

Ներկաներու բուն ծափողջոյններէն ետք, առիթ տրուեցաւ ներկաներուն հարցեր ուղղելու Համօ Մոսկոֆեանին: Այդ առիթով, ուշագրաւ էին վերջերս Իրաքի Քիւրտիստան այցելած եւ խոր տպաւորութիւններով վերադարձած, զբօսաշրջիկային աշխարհի հանրածանօթ դէմքերէն Յովսէփ Աշճեանի շնորհակալական խօսքերը ուղղուած այս յիշատակելի դասախօսութեան կազմակերպիչներուն ու ներկայ ընտրանիին: Ան առաջարկեց Հայոց Ցեղասպանութեան 100 ամեակի սեմին առաւել եւս թափ տալ այսպիսի դասախօսութիւններու կազմակերպման, Իրաքի եւ Իրաքեան Քիւրտիստանի դիւանագիտական ներկայացուցիչներու ներկայութեամբ:

Դրական խօսքերով եւ հարցերով ելոյթ ունեցան նաեւ վաստակաւոր դաստիարակ Դոկտ. Մայք Պօղոսեան, յայտնի գեղանկարիչ Հրաչ Այնթապլեան ու նշանաւոր դերասան ու թատրոնի դէմք Ղազարոս Ալթունեան եւ ուրիշներ:

Դասախօսութեան աւարտին, սահիկներու բացատրութեան ընթացքին, բանախօսը նշեց հայ-քրտական կարեւոր դիւանագիտական իրադարձութեան մը մասին, որ վերջերս տեղի ունեցաւ Ռումանիոյ մայրաքաղաք Պուքրէշի մէջ: Իրաքի ծագումով քիւրտ դեսպանը, Օմար Պերզէնճի, իր նստավայրին մէջ կազմակերպեց դիւանագիտական ընդունելութիւն եւ ճաշկերոյթ, որուն ներկայ եղան ռումանահայ գաղութի ականաւոր դէմքեր, խորհրդարանականներ, Հոգեւոր Առաջնորդը, Ռումանիոյ արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան պաշտօնեաներ, ՀՀ դեսպան Համլէտ Գասպարեանի մասնակցութեամբ... : Մի քանի օր առաջ միայն, ՀՀ արտաքին գործոց նախարար Նալպաստեան, այցելեց Պաղտատ, ջերմօրէն դիմաւորուելով Իրաքի իր պաշտօնակից, ծագումով քիւրտ, Հուշիար Չիպարիի կողմէ... :



Ձեռնարկի աւարտին ներկաները գոհացած այս յոյժ կարեւոր դասախօսութենէն՝ գնահատեցին «Արարատ» օրաթերթի նախաձեռնութեամբ կազմակերպուած հանդիպումները ինչպէս նաեւ շնորհաւորեցին օրուան բանախօսը՝ միջազգային լրագրող Համօ Մոսկոֆեանը:

Վ.Թ.

